Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ

19.01.2015թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ **6701**

որից՝

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	25	0.37
դիմում	5672	84.6
բողոք	460	6.8
կրկնակի	514	7.6
կոլեկտիվ	30	0.44

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **1310**

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	1218	92.8
բողոք	92	7.1

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	180	2.6
կոմունալ-կենցաղային	14	0.2
շինարարական	15	0.2
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	2	0.02
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	81	1.2
առողջապահության	22	0.3
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	316	4.7
օրենսդրական	45	0.6
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	61	0.9
ապարատային		
այլ հարցեր	5959	88.9
սեփականաշնորհում	6	0.08

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2014Թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 6701 նամակներից մոտ 0.37%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 6.8%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 84.6%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 4.7%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 0.9%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 2.6%-ը առնչվում է բնակարանային, 0.2%-ը կոմունալ-կենցաղային, 0.2%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 88.9% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 6596-ին տրվել է գրավոր: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 105-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է: